ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՄԱՐԱՍԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Մ. Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական և մշակութային կենտրոն Ամարասի վանքը գտնվում է պատմական Արցախի Մյուս Հարանդ գավառում[1] (այժմ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Մարտունու շրջանի Սոս գյուղի տարածքում)։ Ամարասի վանքի եկեղեցին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, IV դ. սկզբում[2]։ Սակայն, ավազակների արշավանքների պատճառով ու եկեղեցու կառուցվածքի խիստ մեծ լինելու հետևանքով ոչ ոք չկարողացավ շինել այնպիսին, որ Մեծ Գրիգորը հիմնադրել էր[3]։ Ցավոք, Ամարասի եկեղեցու նախնական հորինվածքի մասին այլ տեղեկություններ չկան, որ չափազանց արժեքավոր կլիներ հայ ճարտարապետության սկզբնավորման շատ խնդիրների պարզաբանման համար։

Ամարասը հատկապես նշանավոր է դառնում IV դ. կեսերից, երբ այնտեղ թաղում են Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ Գրիգորիսին, որը նահատակվել էր քրիստոնեություն տարածելու ժամանակ[4]։ Մինչ այդ Գրիգորիսը շինել և նորոգել էր այդ «կողմերի բոլոր եկեղեցիները, մինչև Ատրպատականի կողմերի գավառները»[5]։

Գրիգորիսը զոհվել է 338 թ.[6]։ Նրան թաղել են Լուսավորչի հիմնադրած եկեղեցու արևելյան կողմում[7]։ V դ. սկզբում, ըստ ավանդության, Ամարասում Մեսրոպ Մաշտոցը հիմնում է առաջին դպրոցը[8]։ Միաժամանակ նա վերականգնում է քրիստոնեական հավատը Արցախ-Ուտիքում[9]։ Նույն դարի վերջում, Առանշահիկ Վաչագան Գ (Բարեպաշտ) թագավորը գտնում է Գրիգորիսի գերեզմանի արդեն մոռացված տեղը և «հրամայում է գերեզմանի վրա մատուռ հիմնել, շտապ ավարտել ու անվանել Սուրբ Գրիգորիսի մատուռ»[10]։ Հավանա-

---

1 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի»-ի, Երևան, 1963, էջ 70։

2 Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 75։

3 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 26։

4 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1940, էջ 175, «Պատմություն Հայոց արարեալ Կիրակոս վարդապետի Գանձակեցվոյ», Թիֆլիս, 1909, էջ 183։

5 Փավստոս Բուզանդ, էջ 73։

6 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959, էջ 139։

7 Մովսես Կաղանկատվացի, էջ 48, 52։

8 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974, էջ 277։

9 Մովսես Կաղանկատվացի, էջ 70։

10 Նույն տեղում, էջ 60։

բար այդ ժամանակաշրջանում Ամարասի եկեղեցին արդեն ավերված է եղել կամ խարխուլ, որովհետև «...շուտափույթ կերպով ու երկյուղով գլուխ բերին սուրբ եկեղեցու կառուցումը»[11], Վաչագանը Գրիգորիսի մասունքները հայանաբերել, հետևաբար և մատուռն ու եկեղեցին կառուցել է 489 թ.[12]։ Ահա այդ մատուռն է, որ մինչև այսօր, համարյա նույնությամբ, պահպանվել է Ամարասի վանքի եկեղեցու բեմի տակ։ Սակայն V դ. վերջում Գրիգորիսի դամբարանը գտնվել է եկեղեցու կողքին։ Հետաղայում է, որ եկեղեցու բազմաթիվ վերակառուցումների ընթացքում, եկեղեցին կառուցվել է անմիջապես մատուռ-դամբարանի վրա։

Սկսած V դ. Ամարասը եղել է երկրամասի խոշոր կրոնական կենտրոններից մեկը և եպիսկոպոսանիստ բնակավայր։ 821 թ. Ամարասը, ողջ գավառի հետ մեկտեղ, ասպատակվել է Պարտավի արաբների կողմից[13], XIII դ. այն կողոպտել են մոնղոլական հրոսակները, իսկ 1387 թ. Լենկթեմուրի արշավանքների ժամանակ խիստ ավերվել է[14]։ Բայց վանքը, իր անընդմեջ գործող դպրոցով, շարունակել է մնալ որպես կրոնական և մշակութային կենտրոն։ XV—XVI դդ. ծանր պայմաններում այնտեղ բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր են գրվել[15]։ Եվ, հավանաբար, հենց այդ ժամանակաշրջանում էլ, շատ վանքերի հետ մեկտեղ, ավերվել է նաև Ամարասը, որովհետև արդեն XVII դ. այն հիմնովին վերակառուցվում է։ Գանձասարի Պետրոս կաթողիկոսը XVII դ. երրորդ քառորդում նորոգում է Վարանդայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասը և վերջինիս հոգևորականների համար ամառանոց ծառայող Հերհեր գյուղում կառուցում Գրիգորիսի անվամբ նոր եկեղեցի[16]։ Այս եկեղեցու հարավային դռան ճակատի արձանագրության մեջ որոշակի նշվում է. «Շնորհօքն Քրիստոսի ես Բարսեղ եպիսկոպոս աշակերտ Պետրոս կաթողիկոսին և ծնողսն իմ Աղայն եւ Գիւլաղայն ի գաւառէն Վարանդու, ի գեղջէ Գիշուն նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամարասայ, պարսպօք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկօք, զեկեղեցիս շքեղացուցաք զարդուք, տուաք շինել զեկեղեցիս անուամբ սրբոյն Գրիգորիսի Հովարան սուրբ աթոռոյն Ամարասայ, որ և մասն բերեալ ի նմանէ ամփոփեցաք աստ, իսկ հիմնարկեցաւ ՌՃԺԶ (1667) թվին, կատարեցաւ ՌՃԻԵ (1676)-ին»[17]։

XIX դ. երկրորդ քառորդում, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո, Ամարասի վանքի համալիրը, որն ուներ բավական ուժեղ պաշտպանական կառուցվածքներ, օգտագործվել է որպես սահմանամերձ ամրոց, իսկ 1832—1847 թթ. այն եղել է ռուս-պարսկական սահմանի մաքսատունը[18]։

---

11 Նույն տեղում, էջ 33։

12 Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 516։

13 Մովսես Կաղանկատվացի, էջ 255։

14 Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, Պատմություն Աղվանից, հ. Ա. Թիֆլիս, 1901, էջ 170—174։

15 Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ, Երևան, 1967, էջ 459—460։

16 Մակար եպիսկոպոս Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 104։

17 Նույն տեղում, էջ 105։

18 Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903—1905, էջ 136։

Սակայն, արդեն XIX դ. կեսերին Ամարասն ամայանում է։ Այդ ժամանակաշրջանում Ամարաս եկած Սարգիս Ջալալյանցը ցավով նշում է առաջին այցելությունից հետո վանքում տեղի ունեցած փոփոխությունները. «Յառաջին տեսութեան իմում վանքն Ամարաս էր ի շինութեան, ըստ որում ի սենեակս նորին ղետեղեալ կայր արքունի մաքսատունն, և դոյր վարդապետ ոմն՝ որ սպասաւորէր դամբարանի սրբոյն Գրիգորիսի, իսկ այժմ հեռացեալ է անտի որպէս մաքսատունն նոյնպես և վարդապետն. և վանքն Ամարասայ մնացեալ է յաւերակ դրութեան»[19]։ Հավանաբար վնասված է եղել վանքի եկեղեցին, որովհետև պարիսպները և բաղաքացիական շենքերը հասել են մինչև մեր օրերը առանց



Նկ. 1. Ամարասի վանքի հատակագիծը։

էական նորոգումների, իսկ եկեղեցին Ջալալյանցի այցելությունից շատ չանցած հիմնովին վերակառուցվում է։ Փաստորեն դա հնի տեղում նոր եկեղեցու կառուցում էր, որովհետև, ինչպես քիչ հետո կտեսնենք, ամբողջապես փոխվում է նաև հորինվածքը։ Մինչ այդ՝ 1848 թ. Ամարասի վանքը ցարական իշխանությունից ետ է վերցնում Գանձասարի մետրոպոլիտ տեր Բաղդասարը[20]։

Եկեղեցին կառուցվում է 1858 թ.՝ շուշեցիների նյութական օժանդակությամբ[21], իսկ նրա հյուսիսային նավում տեղադրված Գրիգորիսի տապանաքարը պատրաստել է շուշեցի ճարտարապետ Միքայել Տեր-Իսրայելյանցը 1898 թ.[22]։ XIX դ. վերջում վանքն ուներ կալվածքներ՝ վարելահողեր, այգի, ջրաղաց[23]։ Վանքից հարավ, Ամարաս գետակի աջ ափի համեմատաբար բարձր

19 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1858, մասն Բ, էջ 336։

20 Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 136։

21 Նույն տեղում։

22 Ե. Լալայան, Վարանդա, «Ազգագրական հանդես», Բ գիրք, 1897, Թիֆլիս, էջ 38։

23 Նույն տեղում։

լանջին նկատվում են շինությունների հետքեր, հանդիպում են կավե խողովակներ, գիրեզմանաքարեր։ Ենթադրվում է, որ դրանք Ամարաս գյուղաքաղաքի ավերակներն են[24]։

Ամարասի վանքի ճարտարապետական համալիրը կառուցված է միանգամայն հարթ տեղանքում։ Նրա հատակագիծը բավական մեծ է. ուղղանկյուն պարիսպներով շրջափակված տարածությունը կազմում է մոտ կես հեկտար (59×85 մ)։ Տեղանքի հարթությունը հնարավորություն է տվել համալիրն իրականացնել կանոնավոր հատակագծով՝ բարձր, ուղղաձիգ պարիսպների ողջ պարագծով ներսում կառուցված են բնակելի և օժանդակ շինությունները, ընդ որում, համալիրի արևելյան մասը բնակելի սենյակների շարքով անջատվում է և ստացվում են երկու ներքին բակեր։ Արևմտյան՝ ավելի ընդարձակ բակի (46×59մ) կենտրոնում բարձրանում է վանքի հիմնական կառուցվածքը՝ ս. Գրիգորիս եռանավ բազիլիկան։ Դեպի այս բակն են բացվում վանքի բոլոր բնակելի սենյակները։ Սեղանատունը, վանահոր երկհարկանի շենքը նույնպես տեղադրված են բակի հարավային կողմում։ Արևելյան, նեղ և ձգված բակը (13,5×46 մ) ունի տնտեսական նշանակություն՝ նրա շուրջն են տեղադրված վանքի գոմը, ախոռը, մթերանոցները։ Ամարասի պարիսպները չորս անկյուններում ունեն շրջանաձև հատակագծով աշտարակներ, որոնք XVII դ. Հայաստանի կրոնական համալիրների համարյա պարտադիր տարրերից են։ Վանքը ունի մեկ մուտք՝ հարավ-արևելյան կողմում, որը բացվում է դեպի տնտեսական բակը։ Սա ունի պաշտպանական նշանակություն, որովհետև ստացվում է ամրությունների երկաստիճան համակարգ և վանքի արևմտյան, հիմնական մասը ներթափանցելու համար պետք էր հաղթահարել նոր արգելք՝ երկու բակերի միջև եղած դարպասը (այժմ քանդված է)։ Նման երևույթ գոյություն ունի Սյունիքի XVII դ. որոշ կրոնական համալիրներում ևս[25]։

Ամարասի պարիսպները և նրանց կից բնակելի ու տնտեսական շենքերը կառուցված են կոպիտ տաշված բազալտ քարերից, կրաշաղախով։ Անկյունները և բացվածքների եզրերը շարված են մաքուր տաշած ֆելզիտից։

Վանքի բնակելի սենյակները հիմնականում տեղադրված են համալիրի հյուսիսային և արևելյան կողմերում։ Սրանք պատկանում են Հայաստանի վանքերի բնակելի շինությունների ամենատարածված տիպին՝ դեպի բակ բացվող ընդհանուր միջանցքի շուրջը երկուական խմբավորված սենյակներով։ Այս հորինվածքն ունեն նաև Տաթևի, Գնդեվանքի, Գեղարդի, Հավուց թառի, Աղջոց վանքի, Խորվիրապի բնակելի շենքերը։ Ամարասում սենյակներն ուղղանկյուն են, թաղածածկ, դեպի ընդհանուր միջանցքը բացվող դռներով։ Դրանք թեպետ մեծ չեն (3,25×4,35մ), բայց նախատեսված են մեկից ավելի վանականների համար։ Սենյակներն ունեն Հայաստանի վանքային համալիրների բնակելի շենքերի համար պարտադիր օջախ (բուխարի) և պատերի մեջ խորշեր (պատրհաններ)։

Ողջ համալիրում վանահոր շենքն առանձնանում է թե՛ իր չափերով և թե՛ հորինվածքով։ Այն երկհարկանի է և իր լայնության կիսով չափ դուրս հարա-

---

24 Մ. Թարխուդարյան, Արցախ, էջ 115։

25 Մ. Մ. Հասրաթյան, Սյունիքի XVII—XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, էջ 24։

վային պարսպից։ Առաջին հարկը բաղկացած է երկու միմյանց հետ հաղորդակցվող, առանց լուսամուտների, թաղածածկ շինություններից։ Հավանաբար, դրանք օգտագործվել են որպես մառան։ Այդ սենյակներից հյուսիսայինի դուռը բակից է, իսկ հարավայինինը՝ դրսից, արևելյան պատի վրա։

Երկրորդ հարկ կարելի է բարձրանալ շենքի հյուսիսային պատին կից կառուցված քարե աստիճաններով։ Սա վանահոր բնակարանն է և, ի տարբերություն առաջին հարկի, բոլոր չորս պատերում ունի մեծ, ուղղանկյուն պատուհաններ, իսկ հարավային ճակատում՝ փայտե բարձակային պատշգամբ, որը բացվում է դեպի Ամարաս գետի գեղատեսիլ հովիտը։

Նկատելով բուխարիների և պատրհանների առկայությունից, բնական է պետք է համարել նաև հյուսիսային պարսպի արևմտյան կողմին կից ուղղանկյուն, թաղածածկ շինությունները, որոնց չափերը համեմատաբար մեծ են (4,35×6,6մ)։ Որպես սեղանատուն, հավանաբար, ծառայել է հարավային պարսպի արևմտյան կողմի երկար, թաղակիր կամարներով, երեք հատվածի բաժանված շենքը։ Այս ենթադրության համար հիմք է ծառայում այն հանգամանքը, որ XVII—XVIII դդ. Հայաստանի վանքային համալիրների սեղանատներ ունեն նույն հորինվածքը (Տաթևի վանք, Գանձասար, Գնդեվանք, Տաթևի Մեծ անապատ, Խորվիրապ և այլն)։

Արևմտյան սենյակների շարքում հետաքրքիր է կամարակապ բաց սրահը, որի նշանակությունը դժվար է որոշել (գուցե օգտագործվել է իբրև ամառային սեղանատուն)։ Ուշագրավ են Ամարասի տնտեսական և կոմունալ շինությունները։ Գոմը և ախոռը կից են համալիրի արևելյան պարսպին (գոմը՝ հյուսիսից, ախոռը՝ հարավից), որոնք զույգ թաղակիր կամարներով, նեղ, երկար, դրսից և բակից մուտքերով շենքեր են։ Յուրաքանչյուր շենքի արևմտյան պատի վրա կա տարբեր բարձրության (գոմում՝ 0,65, ախոռում՝ 0,9 մ), միմյանցից 0,6 մ հեռավորության վրա գտնվող, սրբատաշ քարից կառուցված, թվով 16 կամարակապ մսուր։ Նման մսուրների հանդիպում ենք նաև Հավուց թառում և Տաթևի վանքում։ Կոմունալ շինություններից հետաքրքրական է արևելյան և արևմտյան պարիսպներին կից երկու զուգարանների առկայությունը։ Սրանք նեղ, թաղակապ շինություններ են, ուր բարձրանում են աստիճաններով։ Կոյուղու խողովակը թեքադիր տեղադրված է արտաքին պարսպապատի մեջ և դուրս է գալիս գետնից մեկ մետր բարձր։

Ամարասի վանքի գլխավոր հատակագծում պարզորոշ նկատվում է ողջ համալիրի ֆունկցիոնալ զոնավորում։ Տնտեսական շենքերի առանձնացումը հատուկ է նաև Արցախի հարևան Սյունիքի XVII դ. ճարտարապետությանը (Տաթևի Մեծ անապատ, Շատինի և Տաթևի վանքեր)։ Մուտքի առջև տնտեսական առանձին բակի առկայությունը ոչ միայն կարևոր է պաշտպանական տեսակետից, այլև նպատակահարմար (վանքի անասունները և հյուրերի գրաստները չեն մտնում համալիրի հիմնական բակը, ուր գտնվում են եկեղեցին և բնակելի սենյակները)։

Ամարասի վանքը, գտնվելով հարթավայրում, չէր կարող Հայաստանի շատ վանքերի նման ապավինել իր դիրքին, այլ պետք է ունենար անհրաժեշտ պաշտպանական համակարգ, անկայուն քաղաքական իրավիճակի դեպքում իր անվտանգությունը ապահովելու համար։ Այս նկատառումով, նրա պարիսպները բավական բարձր են, ստորին մասում առանց որևէ բացվածքի, որը կթուլաց-

ներ նրանց անառիկությունը։ Պարիսպներին կից, ներսում կառուցված բնակելի և տնտեսական շենքերի հարթ տանիքները հարմարեցված են կովողներին պատսպարելու և գրոհող թշնամուն հակահարված տալու համար։ Տանիք բարձրանալու համար արևմտյան պարսպի հյուսիսային և հարավային կողմերում քարե հատուկ աստիճաններ են պատրաստված, որոնք իրենց հերթին պաշտպանվում են թաղե ծածկով։ Պարսպապատերը շենքերի տանիքներից բարձր են մեկուկես մետրով։ Պատերի ողջ պարագծով, միմյանցից 1,1 մ հեռավորության վրա, կառուցված են հրակնատներ, որոնք դրսից ունեն եռանկյունաձև պահունակային ծածկ։ Սրանք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանի ուշ միջնադարի վանքերի, ինչպես նաև այդ ժամանակաշրջանում բերդերի վերածված Աշտարակի, Փարպիի բազիլիկաների հրակնատների հետ։



Նկ. 2. Ամարասի համալիրը հարավ-արևմուտքից։

Պարսպի անկյունների աշտարակները երկհարկանի են, սֆերիկ ծածկով։ Առագաստային փոխանցումով սֆերիկ ծածկ ունեն նաև համալիրի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյունների քառակուսի սենյակները, որոնք աշտարակների առաջին հարկերի համար ծառայում են իբրև նախամուտք։ Աշտարակները առաջին հարկում, գետնից բավական բարձր, ունեն երկուական փոքր լուսամուտներ, իսկ վերևում, տանիքից բարձր՝ զույգ հրակնատներ։ Այսպիսով, Ամարասի վանքը, պաշտպանական առումով չի զիջում Հայաստանի այնպիսի վանք-ամրոցների, ինչպիսիք են Հալիձորը, Շատին վանքը, Խորվիրապը, Գնդեվանքը, Տաթևը։

Ամարասի վանքի եկեղեցին ունի Հայաստանի ուշ միջնադարի ճարտարապետության բնորոշ, երկու զույգ մույթերով, եռանավ բազիլիկայի հորինվածք։ Այն կառուցված է կաթնագույն ֆելգիտի մաքուր տաշած քարերից, իսկ

ներսը սվաղված է։ Եկեղեցու ուղղանկյուն ծավալը (արտաքին չափերն են՝ 13,5×23,2 մ) բարձրանում է երկաստիճան որմնախարիսխի վրա։ Միակ դուռը արևմուտքից է։ Ընդարձակ աղոթասրահը (11,25×15,9 մ) երկու զույգ խաչաձև մույթերով և դրանց վրա դրված կամարներով բաժանվում է երեք նավի։



Նկ. 3. Ամարասի եկեղեցու արևմտյան ճակատը։

Արևելքից միջին նավը ավարտվում է երկու կողմերում ուղղանկյուն ավանդատներով բեմի աբսիդով, որի խորությունը մոտ 5 մ է (դա պատճառաբանված է բեմի տակ դամբարանի առկայությամբ)։ Աղոթասրահի ընդերկայնական պատերում բացվում են երեքական մեծ, արտակարգ լայն լուսամուտներ (դրսից՝

1,4, ներսից՝ 2,0 մ)։ Եկեղեցու հարդարանքը պարզ է։ Փաստորեն հարդարված է արևմտյան պատը, որտեղ մուտքի ճակատակալ քարը և վերևում բացված լուսամուտը ունեն պատի հարթությունից դգալիորեն դուրս, իրար միացած երեսակալ, որը ճակտոնի տակ վերածվում է խաչի։ Մյուս ճակատները հարդարանքից զուրկ են, կառուցողները դրանց միապաղաղությունը աշխուժացնելու նպատակով այդ պատերի մակերեսներից 10 սմ լայնությամբ դուրս են բերել մոտ յոթ մետր երկարությամբ հատվածներ։ Երկթեք տանիքի արևմտյան կողմում բարձրանում է զանգակատան վեց սյունանի ռոտոնդան։ Անցյալ դարի 70-ական թվականներին «Արարատ» ամսագրում տպագրված նկարից երևում է, որ այդ ժամանակ եկեղեցու տանիքի վրա բարձրացած են եղել երեք գմբեթանման զանգակատներ՝ մեծը կենտրոնում, մյուս երկուսը՝ արևելյան և արևմտյան ծայրերին (հրատարակված է նաև եկեղեցու հատակագծի սխեման)[26]։

XIX դ. կառուցված այս եկեղեցին չի կրկնել իր նախորդի հորինվածքը՝ վերջինս եղել է ոչ թե եռանավ բազիլիկա, այլ գմբեթավոր շենք։ Այս մասին որոշակի նշում է Ջալալյանցը, որի այցելության ժամանակ դեռ կանգուն էր XVII դարի եկեղեցին՝ այն «... չէ սագաշէն, այլ ի ձև կաթողիկէի ոչ սրածայր...»[27]։

Այստեղ հետաքրքրական է գմբեթի ցածրադիր լինելու փաստը, որը թույլ է տալիս վերականգնելու եկեղեցու նախնական հորինվածքը։ Դա հնարավոր է դառնում Հերհերի ս. Գրիգորիս եկեղեցու հետ համեմատելու շնորհիվ, որը XVII դ. կառուցվել է Ամարասի վանքի ս. Գրիգորիս եկեղեցու հետ միաժամանակ։ Հերհերի այժմ կանգուն եկեղեցին քառամույթ գմբեթավոր բազիլիկա է, որի գմբեթի թմբուկը համարյա չի երևում շենքի արտաքին ծավալում։ Այս հանգամանքը պատահական չէ, եթե նկատի ունենանք նաև, որ Ամարասի այժմյան եկեղեցին ունի նույն լայնությունը, ինչ Հերհերի հուշարձանը (երկարությունը մի փոքր ավել է եռանավ բազիլիկա դարձնելու պատճառով), ապա պետք է ենթադրել, որ XVII դ. Ամարասի եկեղեցին նույնպես եղել է ցածրադիր գմբեթով, քառամույթ գմբեթավոր բազիլիկա։

Ամարասի վանքի համալիրում հայ արվեստի ու ճարտարապետության պատմության համար ամենաարժեքավորը և հետաքրքրականը Գրիգորիսի դամբարանն է։ Այն եկեղեցու բեմի տակ կառուցված, միանավ, թաղածածկ փոքր դահլիճ է, որն այժմ մուտք ունի աղոթասրահի հարավ-արևելյան անկյունից՝ ավանդատան դռան առջևից։ Այստեղից վեց աստիճան ցած դամբարանի նախամուտքն է, ուր բացվում է թաղածածկ, արևմուտքից-արևելք ձգված թունելանման տարածություն (3 մ երկարությամբ), որի մեջ, իր հերթին, կան քարե յոթ աստիճաններ։ Նախամուտքի թաղն ունի արտակարգ շեշտված, պայտաձև կտրվածք։ Թե՛ թաղը և թե՛ պատերը (ինչպես և ողջ դամբարանը) շարված են մոտակա խաղաղ լեռան մաքուր տաշած քարերից։ Նախամուտքի արևելյան ճակատն ունի պարզ երեսակալով, լուսամուտաձև խորշ, իսկ բացվածքի պայտաձև վերջավորության շուրջը փորագրված է հնգաշերտ գոտի, որը երկու կողմերից հորիզոնական ձգվում է մինչև ընդերկայնական պատերին հատվելը։ Խորշի երկու կողմերում քանդակված են մեկական արմավենի։ Հարավային կողմի արմավենին լավ է պահպանվել։ Այն բավական ոճավորված է, ճյուղերը

26 «Արարատ», Վաղարշապատ, 1872, էջ 26։

27 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., մասն Ա, Տփղիս, 1842, էջ 196։

բանդակված են նշտարաձև տերևների նման, բնի երկու կողմերում կան անհամաչափ կլոր պտուղներ։ Նման ոճավորված քանդակներ բնորոշ են Հայաստանի IV—V դդ. ճարտարապետական հուշարձաններին (Քասաղի բազիլիկա, Տեկո-



Նկ. 4. Գրիգորիսի դամբարանի (489 թ.) հատակագիծը, կտրվածքները, մանրամասները։

րի տաճար)։ Խորշի հյուսիսային կողմի արմավենու վերին մասը չի պահպանվել (քարը չարդված է), սակայն ստորին մասից երևում է, որ այն իր ձևով առաջին արմավենու կրկնությունն է։ Նախամուտքի պատերի պարագծով,

թաղի հիմքի բարձրությամբ, ձգվում է միևնույն երկրաչափական զարդաքանդակի կրկնությամբ փորագրված քանդակաղարդ գոտի։ Զարդաքանդակը ուղղանկյուն է, «ոսկե հատման» համաչափություններով (8×13 սմ), որը անկյունագծերով և խաչաձև կողերով բաժանվում է ութ հավասար եռանկյունիների։ Հետաքրքրական է, որ այս երկրաչափական զարդաքանդակը վաղ միջնադարի հայ ճարտարապետության մեջ հանդիպում է հատկապես V դ. հուշարձաններում։ Միևնույն քանդակն է օգտագործված Փարբիի Ծիրանավոր միանավ եկեղեցու (V դ.) աբսիդի խոյակների վերին մասում, Ամարասի դամբարանի հետ համարյա միաժամանակ կառուցված Տեկորի ս. Սարգիս դմբեթամոր բազիլիկայի (478—490) հյուսիսային ճակատի բաց աբսիդի որմնասյուների խարիսխների վրա, ինչպես նաև Արցախի ու Սյունիքի սահմանում գտնվող Ծիծեռնավանքի (IV դ., վերակառուցված V դ.) մույթերի վրա։

Նախամուտքից դուռ է բացվում դեպի դամբարանի թաղման խուցը։ Դռան ուղղանկյուն բացվածքի մեջ, պատի հաստության հաշվին արված են երեք աստիճաններ, որոնք իջնում են մինչև դամբարանի հատակը։ Դամբարանի հատակագիծը ուղղանկյուն է, արևելքից-արևմուտք ձգված (1,90×3,75, բարձրությունը՝ 3,5 մ)։ Պատերը և պայտաձև կտրվածքով թաղը կառուցված են մաքուր տաշած բազալտից։ Հարավային դռան դիմաց, հյուսիսային պատի արևելյան ծայրում կա մի այլ դուռ, որը տանում է դեպի դամբարանի երկրորդ մուտքը։ Սա իր ձևերով և չափերով առաջինի կրկնությունն է և լուծված է նրան սիմետրիկ։ Սակայն վերջին վերակառուցման ժամանակ այս մուտքը փակվել է և կիսով չափ հողով լցվել։ Ուսումնասիրության համար մատչելի են միայն նախամուտքի արևելյան պատը՝ բարձրության կիսով չափ, նրա առջևի ուղղանկյուն հարթակը և դեպի վեր տանող հինգ աստիճանները։ Այստեղ ևս արևելյան պատի վրա կա նույն պարակալով պսակված, պայտաձև կամարով խորշ։ Խորշից վերև լցված է հողով, սակայն անկասկած է, որ հյուսիսային նախամուտքը և՛ ձևերով, և՛ հարդարանքով եղել է հարավայինի կրկնությունը։

Դամբարանի հյուսիսային մուտքը հավանաբար փակվել է մինչ Ամարասի եկեղեցու XIX դ. վերակառուցումը, որովհետև դրանից հետո այցելուները նրա առկայության մասին չեն հիշատակում[28]։ Ինչ վերաբերվում է այդ երկու մուտքերի նախնական ձևերին՝ երկարությանը և աստիճանների քանակին, ապա պարզվում է, որ սկզբնական հորինվածքի նախամուտքերն ունեցել են ընդամենը հինգ աստիճան (դռան միջի աստիճաններով՝ ութը)։ Դա առաջին հերթին հաստատվում է նախամուտքի զարդագոտու և ծածկի թաղի երկարությամբ, որոնք շարունակվում են մինչև հինգերորդ աստիճանը, իսկ ապա հայտնի է դառնում նաև Ջալալյանի վկայությունից, որը նշում է, թե դեպի դամբարան «...ը (8) աստիճան պարտ է իջանել»[29]։ Իսկ XIX դ. վերջին այցելուները հիշատակում են արդեն 18 աստիճանի առկայությունը[30], որը պայմանավորված է վերակառուցման ժամանակ եկեղեցու հատակի նիշի զգալի բարձրացմամբ։ Այն փաստը, որ դամբարանը իր նախնական հորինվածքով ոչ թե լրիվ ջետնափոր է եղել, այլ կիսով չափ բարձր է գտնվել գետնից, ապացուցվում է

28 Ե. Լալայան, Վարանդա, էջ 38։
29 Ս. Ջալալյանց, նշվ. աշխ., էջ 196։
30 Ն. Բարխուդարյանց, Արցախ, էջ 112, Ե. Լալայան, Վարանդա, էջ 38։

թաղման խցի արևմտյան պատի լուսամուտի առկայությամբ, որն ունի 0,9 մ բարձրություն (ծածկի թաղից ցածր է տեղադրված 0,3 մ), ավարտվում է պայտաձև կամարով, և IV—V դդ. հայ ճարտարապետական այլ հուշարձանների նման դեպի դուրս համարյա չի լայնանում։ Լուսամուտի երեսակալը նույնն է, ինչ նախամուտքի խորշինը։ Ահա այս լուսամուտի բարձրությունը ցույց է տալիս, որ Ամարասի դամբարանի ծավալը սկզբնական շրջանում նվազագույնը 1,5—2,0 մ բարձր է եղել գետնից (գումարված է նաև ծածկի հաստությունը)։

Դամբարանը արևելյան կողմում ավարտվում է պայտաձև կամարով ծածկված նեղ և երկար խորշով (0,96×1,28 մ), որի կամարը նստում է պարզ տրամագծով իմպոստների վրա (սալիկ, կորագիծ վերջավորությամբ)։ Խորշը արևելքից փակված է անմշակ քարի և խճի շարվածքով, սակայն պարզ երևում է, որ այն շարունակվում է կրաբետոնի զանգվածից այն կողմ ևս։ Այդ շարվածքը տեղադրությամբ համընկնում է եկեղեցու արևելյան պատի հիմքի հետ։ Հետևաբար, դամբարանը ելք է ունեցել և արևելքից, որը նշում են նաև Մ. Բարխուդարյանը և Ե. Լալայանը[31]։ 1961 թ. եկեղեցու արևելյան ճակատի հիմքերը դրսից պեղելիս այդտեղ հայտնաբերվել են դեպի դամբարան տանող աստիճաններ։

Խորշը, հետևաբար և դամբարանի արևելյան մուտքը փակվել են XIX դ., այժմյան եկեղեցին կառուցելիս։ Սակայն պարզ չէ, թե այդ մուտքը եղե՞լ է արդյոք դամբարանի սկզբնական հորինվածքում։ Խորշի երկայնական պատերի շարվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախնական են (այսինքն V դ. կառուցված) միայն նրանց մի մասը՝ 0,8 մ երկարությամբ։ Այս հատվածը կառուցված է նույն քարից և շինարարական նույն տեխնիկայով, ինչպիսին է ողջ դամբարանը։ 0,8 մ երկարությամբ ձգվում են նաև խորշի կամարի իմպոստները, իսկ շարունակությունը, պարզ երևում է, որ հետագայում է ավելացված։ Պետք է ենթադրել, որ այն ավելացվել, հետևաբար և դամբարանի արևելյան մուտքը բացվել է Ամարասի վանքի եկեղեցու XVII դ. հիմնովին վերակառուցման ժամանակ, երբ այն ստացել է քառամույթ գմբեթավոր բազիլիկայի հորինվածք։ Իսկ Ամարասի դամբարանն իր արևելյան խորշով ունի նույն հորինվածքը, ինչպիսիք ունեն Գայանեինը՝ Էջմիածնում, Մաշտոցինը՝ Օշականում։

Ամարասի Գրիգորիսի դամբարանի տեղը հայ ճարտարապետության վաղ միջնադարի նույնատիպ հուշարձանների շարքում որոշելու և նրա արժեքը բացահայտելու համար անհրաժեշտ է դիտարկել Հայաստանի IV—V դդ. դամբարանները և այդ տիպի զարգացման ընթացքը։

Հայաստանի վաղ քրիստոնեական մեմորիալ ճարտարապետությունը բաղկացած է մատուռներից, դամբարաններից և կոթող-հուշարձաններից[32]։ Այս կառուցվածքներից հատկապես լավ են ուսումնասիրված կոթողները[33]։ Ինչ վերաբերվում է դամբարաններին, ապա վերջիններս համեմատաբար քիչ են մեզ հասել և հատուկ ուսումնասիրության չեն արժանացել։

---

31 Նույն տեղում։

32 A. Khatchatrian, L'Architecture Arménienne du IV au VI siecle, Paris, 1971, p. 25.

33 Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները VI—VII դարերում, Երևան, 1948։

Վաղ միջնադարի Հայաստանի դամբարաններից ամենահայտնին և լավ ուսումնասիրվածը Աղցի Արշակունյաց թագավորների դամբարանն է, կառուցված 364 թ.։ Սակայն 1973—1974 թթ. պեղման և մաքրման աշխատանքները (ՀՍՍՀ պետշինի ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման հատուկ գիտաարտադրական արվեստանոց) նոր և բավական հետաքրքրական նյութեր հայտնաբերեցին, որի հետևանքով անհրաժեշտություն զգացվեց դամբարանի, ինչպես նաև նրա կողքին գտնվող եկեղեցու հորինվածքների վերաբերյալ եղած պատկերացումների վերանայման։



Նկ. 5. Աղցի մեմորիալ համալիրը (IV դ.)։

Աղցի դամբարանը սրբատաշ բազալտից կառուցված ուղղանկյուն թաղածածկ սրահ է (2,60×3,70 մ, բարձրությունը՝ 2,5 մ), արևելյան կողմում կիսաշրջանաձև աբսիդով, իսկ հյուսիսային և հարավային պատերում՝ շեշտված պայտաձև կամարակապ խորշերով, որոնցում ամփոփված են եղել արքայական ոսկորները[34]։ Դամբարանի դուռը արևմուտքից է։ Մաքրման աշխատանքներից հետո պարզվեց, որ դամբարանը ոչ թե գետնափոր է (ինչպես այն համարվում է մասնագիտական գրականության մեջ), այլ կիսագետնափոր։ Կառուցվածքը հարավային և արևելյան կողմերում ունի հինգաստիճան գետնախարիսխ, որի հետևանքով նրա ծավալը, Ամարասի նման, իր բարձրության կիսով չափ (1,4 մ) դուրս է գետնից։ Դամբարանի տանիքը հարթ է։ Պեղումներից հետո հուշարձանի հարավային կողմում բացվել են կոթողների հիմքեր։ Այս մեմո-

34 Աղցի դամբարանը վկայում է, որ արդեն IV դ. կեսերին հայ ճարտարապետության մեջ օգտագործվել է պայտաձև կամար, որը հետագայում՝ V—VII դ. լայն տարածում գտավ Հայաստանում։

րիալ համալիրի հյուսիսային կողմում 1974 թ. բացվեց նաև երկու զույգ մույթերով եռանավ բազիլիկա (մինչև այժմ այն համարվում էր միանավ), արտակարգ շեշտված պայտաձև հատակագիծ ունեցող աբսիդով և միայն հարավային կողմում ուղղանկյուն ավանդատնով։ Մույթերը սկզբնական շրջանում եղել են ուղղանկյուն, ապա դարձել են T-աձև և խաչաձև (հյուսիսայինները)։ Բազիլիկայի հատակի նիշը հավասար է դամբարանի կտուրին։ Այս երկու հուշարձանները կառուցված են միմյանց կողքի, սակայն դժվար է որոշել նրանց կառուցման հերթականությունը։ Ակներև է, որ բազիլիկը դամբարանի հետ մեկտեղ միևնույն ժամանակաշրջանի արդյունք են (IV դ. երկրորդ կես) և կազմում են մեմորիալ համալիրի բաղկացուցիչ մասը։ Համալիրի այդպիսի կազմ (եկեղեցի, դամբարան, կոթող) հատուկ է միջնադարյան հայ ճարտարապետության մեմորիալ հուշարձաններին։

Իրենց ճարտարապետությամբ Հայաստանի վաղքրիստոնեական դամբարանների շարքին են պատկանում Անիի Իդաձորի երկու ժայռափոր կառուցվածքները, որոնք համարվել են մկրտարաններով եկեղեցիներ (Օրբելի, Ղիփշիձե)։ Սակայն Մ. Տոկարսկու վերջերս լույս տեսած աշխատության մեջ հանդամանորեն և համոզիչ հիմնավորվում է, որ այդ ժայռափոր հուշարձանները Աղցի տիպի դամբարաններ են և պատկանում են նույն ժամանակաշրջանին[35]։

Աղցի տիպի մի այլ դամբարան բացվել է 1940 թ. ամռանը, Երևանի բուսաբանական այգու մոտ, որը չի պահպանվել և ժամանակին չի չափագրվել։ Մնացել է միայն նրա նկարագրությունը։ Դամբարանի արևելյան խորշի կողքին եղել է նաև քառակող քանդակազարդ կոթող[36]։

IV դ. վերջի և V դ. սկզբի կառուցվածք է Էջմիածնի Հռիփսիմեի տաճարի բեմի տակի դամբարանը։ Այն արևելքից արևմուտք ձգված, սրբատաշ տուֆ քարերից կառուցված թաղածածկ սրահ է (2,05×3,35 մ, բարձրությունը՝ 2,10 մ), որն արևելյան կողմում ավարտվում է կիսաշրջանաձև աբսիդով։ Թաղը կտրվածքում պայտաձև է։ Հռիփսիմե և Գայանե նահատակ կույսերի վկայարաններով դամբարանները կառուցել են Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ II-ը, IV դ. սկզբին[37]։ Սակայն նույն դարում դրանք հիմնովին ավերվել են պարսից Շապուհ արքայի արշավանքների ժամանակ[38], որից հետո Սահակ կաթողիկոսը (387—439) վերակառուցել է այդ վկայարանները[39]։ 618 թ. Կոմիտաս կաթողիկոսը քանդել է Հռիփսիմեի դամբարանի վրայի մատուռը և կառուցել ներկայիս տաճարը[10], իսկ Գայանեի վկայարանի տեղում 630 թ. Եզր կաթողիկոսը կառուցել է քառամույթ, գմբեթավոր բազիլիկայի հորինվածքով, այժմ կանգուն եկեղեցին։ Վերջինիս բեմի տակ պահպանվել է Սահակի կառուցած վկայարանի ստորին մասը՝ ուղղանկյուն, թաղածածկ դամբարանը, որը մուտք ունի եկեղեցու հարավային ավանդատնից։

---

35 Н. М. Токарский. По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, стр. 51—65.

36 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 32։

37 «Ագաթանգեղայ Պատմութիւն», Թիֆլիս, 1883, էջ 440—446։

38 «Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ», Փարիզ, 1895, էջ 76։

39 Նույն տեղում։

40 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի», Թիֆլիս, 1913, էջ 141։

Հայաստանի V դ. դամբարաններից իր հորինվածքով ինքնատիպ է Զովունիի ճարտարապետական խմբին պատկանող ս. Վարդան մատուռի և նրան հարավից կից դամբարանի ընդհանուր կառույցը[41]։ Դամբարանը սրբատաշ քարերով շարված ուղղանկյուն խուց է, որը, ըստ երևույթին, եղել է թաղածածկ (այժմ ծածկը քանդված է)։ Ենթադրվում է, որ Զովունիի ս. Վարդան մատուռ-դամբարանը կառուցվել է 451 թ., Ավարայրի ճակատամարտում զոհված, Վարդան Մամիկոնյանի զինակից Տաճատ Գնթունու գերեզմանի վրա[42]։

Ջրվեժի V դ. մեմորիալ համալիրի բաղկացուցիչ մասն է կազմում ստորգետնյա դամբարանը։ Համալիրը բաղկացած է միանավ եկեղեցուց, նրա հյուսիսային կողմում տեղադրված բազմաստիճան պատվանդանի վրա բարձրացող հուշասյունից և վերջինիս արևելյան կողմում կառուցված ուղղանկյուն, թաղածածկ դամբարանից[43]։

Նախճավանում (Անիի մոտակայքում) դեռ դարասկզբում պահպանվել էր Կամսարական իշխանների տոհմական դամբարանը։ Արտավազդ Կամսարականի գերեզմանաքարի վրայի արձանագրությունից, ինչպես նաև Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունից պարզվում է, որ դամբարանը V դ. կառույց է[44]։ Բարեբախտաբար կա դամբարանի Հ. Օրբելու նկարագրությունը, որի շնորհիվ հնարավոր է կազմել նրա հատակագիծը։ Այն բաղկացած է միմյանց դռնով հաղորդակցվող երկու թաղակապ սենյակներից, որոնք ունեն համարյա նույն չափերը (3,73×1,74 մ, 3,79×1,77 մ, բարձրությունը 2,32 մ)[45]։

Հայաստանի V դ. դամբարաններից, Ամարասի հետ ունեցած իր նմանությամբ, առանձնապես հետաքրքիր է Մեսրոպ Մաշտոցի դամբարանը՝ Օշականում։ Այն կառուցվել է 442/43 թթ., Մաշտոցի մահվանից երեք տարի հետո. «...երեք տարի անցնելուց հետո՝ Վահան Ամատունուն հաջողվեց... սքանչելի տաճար կառուցել տաշած, քանդակած քարերով և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը»[46]։ Օշականի տաճարը բազմիցս վերակառուցվել է, որի հետևանքով իր նախնական հորինվածքը չի պահպանել։ Ներկայիս եկեղեցին կառուցել է Գևորգ կաթողիկոսը՝ 1875 թ.[47]։ Սակայն եկեղեցու բեմի տակ պահպանվել է Մաշտոցի դամբարանը, որի մուտքը այժմ հարավային ավանդատնից է։ Դամբարանն արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն (2,7×4,0 մ), թաղածածկ խուց է և, Ամարասի նման, արևելքում ավարտվում է ուղղանկյուն խորշով։ Արևմտյան կողմում պահպանվել է համեմատաբար լայն բացվածք, որը նախկինում դուռ կամ լուսամուտ է եղել (հետևաբար դամբարանը կիսագետնափոր է եղել)։ Դամբարանը բազմիցս վերանորոգվել է (վերջին անգամ 1960-

41 Ա. Ս. Սահինյան, Զովունիի ճարտարապետական խումբը (ՀՍՍՀ ԳԱ «Բերեր», 1968, № 1)։

42 Նույն տեղում։

43 Н. М. Токарский, Джрвеж. II, Вохджаберд («Археологические раскопки в Армении», № 11, Ереван, 1964).

44 A. Khatchatrian, նշվ. աշխ., էջ 30։

45 И. Орбели, Шесть армянских надписей VII—X вв. («Христианский Восток». т. III, вып. I, П., 1914, стр. 77).

46 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 95։

47 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, էջ 143։



Նկ. 6. Հայաստանի վաղ միջնադարի դամբարանների հատակագծերը. 1. Աղց (364 թ.), 2, 3. Անի (IV դ.), 4. Հռիփսիմե (387—439 թթ.), 5. Գայանե (387—439 թթ.), 6. Զսվունի (V դ.), 7. Օշական (442—443 թթ.), 8. Նախճավան (V դ.), 9. Ամարաս (489 թ.), 10. Ջրվեժ (V դ.), 11. Աղուդի (VI դ.), 12. Կարենիս (VII դ.).

ական թթ. սկզբին), որոնց ընթացքում փոխվել է երեսապատումը։ Սակայն հորինվածքը և հիմնական չափերը մնացել են նույնը։ ՀՍՍՀ պետշինի ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության արխիվի չափագրություններից (որը կատարվել է մինչև դամբարանի վերջին նորոգումը) պարզվում է, որ այն երկրորդ մուտքն է ունեցել նաև հյուսիսային կողմից (այժմ վերածվել է դեպի հյուսիսային ավանդատունը բացվող լուսամուտի)։ Ինչպես տեսնում ենք, թե՛ Ամարասի և թե՛ Օշականի V դ. դամբարանները ունեն նույն հորինվածքը՝ ուղղանկյուն, թաղածածկ սրահ, արևելքում խորշ, արևմուտքում՝ բացվածք, հյուսիսային և հարավային պատերում՝ սիմետրիկ տեղադրված զույգ մուտքեր, ընդ որում երկու դամբարաններն էլ կիսագետնափոր են։

Հայաստանում VI դ. դամբարաններ քիչ են պահպանվել։ Այս դարերի մեմորիալ հուշարձանները բազմաստիճան պատվանդանով հուշասյուներ են՝ կառուցված մատուռների կամ եկեղեցիների կողքին (Աղուդի, Օձուն, Արդվի)։

Օձունի VI դ. նշանավոր հուշարձանը չունի ներքին տարածություն։ Ի տարբերություն վերջինիս, Աղուդիի մահարձանը զուգակցված է երկու թաղակապ, ուղղանկյուն հատակագծով խցերի հետ։ Հուշարձանի անմիջապես կողքին, մինչև XX դ. սկզբները, պահպանված է եղել հնագույն մատուռի աբսիդը։

Կարենիսի վանքի VII դ. միանավ եկեղեցու դահլիճի տակ պահպանվել է թաղակապ, արևելքում աբսիդով ավարտվող դամբարան, որի չափերը բավական փոքր են և նախատեսված է ոչ թե թաղման, այլ մասունքներ պահելու համար[48]։

Հայաստանի վաղ միջնադարի մեմորիալ հուշարձանները քննելիս հետազոտողները նշում են այն ընդհանրությունը, որ կա նրանց և սիրիական նույնատիպ կառուցվածքների միջև։ Այսպես, Աղցը (հետևաբար և Անիի վիմափոր դամբարանները) առնչվում է Հյուսիսային Սիրիայի II դ. Դանայի, Քատուրայի, Միջլեյայի դամբարանների հետ[49], իսկ Աղուդիի մահարձանը՝ Քատուրայի Էմիլիուս Ռեգինուսի (195 թ.) հուշարձանի հետ[50]։

Սակայն վաղ միջնադարի հայկական դամբարաններն իրենց առանձնահատկություններով ավելի տարբերվում են սիրիականներից, քան նմանվում։ Այսպես, Աղցի տիպի դամբարանները, ի տարբերություն սիրիականների, կիսագետնափոր են, կողմնորոշված արևելք-արևմուտք ուղղությամբ, և, ամենակարևորը, արևելքում ունեն կանոնավոր աբսիդ, որով նրանք նմանվում են մատուռների։ IV դ. վերջում և V դ. դամբարանների ճարտարապետությունը Հայաստանում դառնում է միանգամայն ինքնատիպ և սիրիականից տարբեր։ Հռիփսիմեի, Գայանեի, Մաշտոցի, Գրիգորիսի դամբարանները թաղածածկ սրահներ են, առանց կողային խորշերի, ընդ որում Օշականում և Ամարասում դրանք ունեն միանման և մյուս դամբարաններից տարբեր հատակագծային լուծում՝ արևելյան կողմում ուղղանկյուն խորշով և մուտքերով՝ հյուսիսային և հարավային ընդերկայնական պատերում։ V—VI դդ. երևան են գալիս նաև երկու սրահով մեմորիալ հուշարձաններ՝ Նախճավանում և Աղուդիում։ Վերջինս

---

48 Մ. Հասրաթյան, Լուսակերտի ճարտարապետական երկու հուշարձաններ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1972, № 2)։

49 Н. М Токарский, Архитектура Армении IV--XIV вв., Ереван, 1971. стр. 73.

50 A. Khatchatrian, նշվ. աշխ., էջ 93։

«... հեռավոր նմանություն ունենալով Ասորիքի հելլենիստական շրջանի հուշարձանների հետ, ... տեղական հայկական կուլտուրայի գործ է»[51]։

Կարևոր է պարզել վաղ միջնադարի հայկական դամբարանների ճարտարապետական ձևերի ակունքները։ Ցավոք, պատմիչների նշած նախաքրիստոնեական Հայաստանի դամբարանները մեզ չեն հասել։ Փավստոս Բուզանդը նշում է միայն, որ պարսիկները 364 թ. Դարանաղեաց գավառի Անի ամրոցում երբ կողոպտում էին Արշակունյաց թագավորների դամբարանները, չկարողացան միայն բացել Սանատրուկ թագավորի շիրիմը (III դ. սկիզբ), նրա «հսկայական պինդ ու ճարտար շինվածքի պատճառով»[52]։ Ենթադրվում է, որ Աղցի դամբարանը իր ճարտարապետությամբ ընդհանրություն պետք է ունենա Անի-Կամախի դամբարանների հետ[53]։ Սակայն Աղցի դամբարանը քրիստոնեական մշակույթի արդյունք է, նրանից բխող իր առանձնահատկություններով, և դժվար թե նա ունենա հեթանոսական Հայաստանի մ. թ. II—III դդ. դամբարանների հորինվածքը։ Վերջին տարիներին Փարաքարում (մ. թ. ա. I դ.) և Սիսիանում (մ. թ. II դ.) բացված դամբարանները լույս են սփռում նախաքրիստոնեական Հայաստանի դամբարանների ճարտարապետության վրա։ Սիսիանի հուշարձանը ուղղանկյուն սրահ է, ծածկը իրականացված երկայնական պատերից քարե սալերը մեկը մյուսի վրա աստիճանաբար կախելով։ Թաղման սրահի մեջտեղում դրված է կավե դագաղը։ Հորինվածքով և, առաջին հերթին, ծածկի ձևով Սիսիանի դամբարանն իր նախատիպն ունի նախնադարյան Հայաստանի մեմորիալ հուշարձաններում՝ այդպիսիք են, օրինակ, Օշականի ուղղանկյուն հատակագծով դամբարանները[54]։

Փարաքարի դամբարանը քարե բազմանիստ հարթակի վրա կլոր հատակագծով բարձրացող շենք է, որի կենտրոնում գտնվում է ձվաձև գերեզմանը[55]։ Այդպիսի դամբարաններ Հայաստանում հանդիպում են հելլենիստական ժամանակաշրջանից մինչև մ. թ. առաջին դարերը[55]։ Հետևաբար, նախաքրիստոնեական Հայաստանի դամբարաններն, իրենց ճարտարապետությամբ, տեղական ավանդույթների շարունակությունն են և չեն կրկնել սիրիական ձևերը։

Հայաստանի վաղ միջնադարի դամբարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս երկրում մեմորիալ կառուցվածքների այս տիպի բավական տարածված լինելը, նրա տեղական ակունքները, բազմազան ձևերի հետ միաժամանակ և այն ընդհանրությունը, որ կա նրանց հորինվածքներում։ Հայ ճարտարապետության IV—VI դդ. այդ հետաքրքրական և արժեքավոր ստեղծագործությունների ինքնատիպության, նրանց ձևերի զարգացման էվոլյուցիայի բացահայտման գործում կարևոր դեր և նշանակություն ունի Ամարասի Գրիգորիսի դամբարանը, որպես այս տիպի որոշակի թվագրված և ամենալավ պահպանված հուշարձանը։

---

51 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 137։

52 Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, էջ 192։

53 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 90։

54 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 222։

55 Գ. Տիրացյան, Փարաքարի աշտարակաձև դամբարանը և նման հուշարձաններ Հայաստանում և Առաջավոր Ասիայում («Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1)։

56 Նույն տեղում։

АРХИТЕКТУРНЫЙ КОМПЛЕКС АМАРАСА

М. М. АСРАТЯН

Резюме

Амарасский монастырь являлся важным культурным и религиозным центром средневековой Армении. Основанный в начале IV в. Григорием Просветителем, он в дальнейшем неоднократно перестраивался, в последний раз—в XIX в. Комплекс монастыря, находящегося у селения Сос Мартунинского района Нагорно-Карабахской автономной области, имеет четкий прямоугольный план. По периметру крепостных стен сооружены жилые и коммунальные помещения (XVII в.). В центре ансамбля находится церковь монастыря—трехнефная базилика, воздвигнутая в 1858 г. на месте древней церкви. Под ее апсидой расположена усыпальница Григориса (внука Григория Просветителя), построенная в 489 г. Неизвестный в специальной литературе, этот интересный памятник сохранился в основном без изменения. Усыпальница своей архитектурой повторяет формы однотипных сооружений Армении V в., в первую очередь, усыпальницы Месропа Маштоца в Ошакане (442—443 гг.), а примененный в ней декоративный орнамент встречается в известных памятниках армянского зодчества V в.—в трехнефной базилике Цицернаванка, в однонефной церкви Парби и Текорской купольной базилике (478—490). Благодаря хорошей сохранности и точной датировке, усыпальница Григориса в Амарасе имеет важное значение для истории мемориальной архитектуры Армении и дополняет ряд армянских однотипных сооружений раннего средневековья.